ՀՀ Արմավիրի մարզի Հայկավան համայնքի ղեկավարի 2011թ.-ի 1-ին կիսամյակի հաշվետվություն

2011 թվականի հուլիսի 15 –ին տեղի ունեցավ Հայկավան համայնքի ընդհանուր ժողով մասնակցությամբ համայնքի ղեկավար՝ Մամիկոն Գևորգյանի, Հ.Հ. Արմավիրի փոխմարզպետ Տիկին՝ Լ. Մուրադյանի, համայնքի ավագանու թվով 6 անդամների , և համայնքի 65 բնակիչների:

1. Տնտեսությունների թիվը 594
2. Բնակչության թիվը 1622
   որից տղամարդ 832
   կանայք 790
3. Կենսաթոշակառուներ 177
4. Նպաստառուներ 37
5. Հայրենական պատերազմի մասնակիցներ 1 մարդ
6. Դպրոցի երեխաների թիվը 145
7. Ուսուցիչների թիվը 20

Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածում ասվում է.

Համայնքը պետական համակարգի ժողովրդավարական հիմքն է:

Համայնքը բնակիչների հանրություն և վարչատարածքային միավոր է, որի սահմաններում համայնքի բնակիչները ուղղակիորեն կամ օրենքով սահմանված ընտրովի մարմինների միջոցով իրականացնում են տեղական ինքնակառավարում:

Համայնքն իրավաբանական անձ է: Համայնքն ինքնուրույն տնօրինում է իր սեփականությունը, ունի բյուջե:

2011թվականը սկսեցինք ավագանու կողմից ընդունված և հաստատված ծրագրերին համապատասխան:

2011թ-ի 1 –ին կիսամյակում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է թվով 8 որոշումներ , կայացվել է թվով 13 կարգադրություններ:

2011 թականի 1-ին կիսամյակում գյուղապետարանում ստացվել են տարբեր բնույթի դիմումներ , որոնք քննարկվել և ստացել են հապատասխան լուծում:

Հաշվետու կիսամյակում գյուղապետարանը Արմավիրի մարզպետարանից և այլ կազմակերպություններից ստացել է թվով 32 տարբեր բնույթի պաշտոնական գրություններ: Նշված գրությունները օրինական կարգով մուտքագրվել են և ժամանակին տրվել են պահանջվող ընթացք:

Գյուղապետարանի կողմից մարզպետարան և տարբեր կազմակերպություններ են ներկայացվել թվով 43 պաշտոնական գրություններ:

Համայնքի բնակիչներին 2011 թվականի 1-ին կիսամյակում տրվել են տարբեր բնույթի թվով 308 տեղեկանքներ:

Հաշվետու կիսամյակում կայացել է ավագանու թվով 6 նիստեր:

Ավագանու նիստերում քննարկվել է աղբահանության, սանիտարական վիճակի բարելավման, գարնանը գյուղատնտեսական աշխատանքներին աջակցելու և սոցիալական ոլորտի հարցեր:

Հաշվետու կիսամյակում գյուղապետարանի կողմից կատարվել է նկատելի աշխատանքներ.

1. Նորոգվել է ներտնտեսային և դաշտամիջյան ճանապարհները, վերանորոգվել է կամուրջները :

2. Ձմռան ձնհալի և անձրևաջրերի պատճառով առաջացել էին մեծ ջրափոսեր և նոր զարգացող թաղամասը անանցանելի էր դարձել,հիմնովին նորոգվել է թաղամաս տանող ճանապարհը , կատարվել է հողալցում և ավազապատում:

3.Համայնքի ղեկավարի մշտական ուշադրության կենտրոնում է աղբահանության աշխատանքները: Պարբերաբար կատարվում է աղբահանության աշխատանքներ՝ ամիսը 2 –ից 3 անգամ:

4. Ժամանակին հայտնաբերվում և վերացվում է խմելու ջրի ցանցի հետ կապված բոլոր խնդիրներն ու թերությունները:Պայմանագիր է կնքվել ՀՀ ԱՆ պետական հիգենիկ համաճարակային կենտրոնի հետ սանիտարաքիմիական հետազոտություն կատարելու համար, նրանց հետ համատեղ կարգով ամիսը մեկ անգամ կատարվում է խմելու ջրի ախտահանություն (քլորացում) :

5.Գյուղապետարանը մշտապես իր աջակցությունն է ցուցաբերում ներտնտեսային ոռոգման ջրագծերի նորոգման և մաքրման աշխատանքներին: Այս կիսամյակում կատարվել է կիսախողովակների նորոգում ,ջրատարների մաքրում և հողաբերացում:

6.Մարտի 8-ի կապակցությամբ համայնքում կազմակերպվել է միջոցառում:

7.Համայնքը ձեռք է բերել սալորենու և ծիրանենու տնկիներ և անհատույց բաժանել համայնքի բնակիչներին:

8. Մայիսի 1-ին տեղի է ունեցել Հայկավան համայնքի ղեկավարի ընտրությունները որտեղ համայնքի ղեկավար է վերընտրվել Մամիկոն Գևորգյանը:

9.Գյուղապետարանի և ավագանու անդամների մասնակցությամբ տեղի են ունեցել մի շարք այլ միջոցառումներ:2011թ.-ի մայիսի 9-ին կազմակերպվեց միջոցառում Հայրենական պատերազմում տարած փայլուն հաղթանակի 66ամյակին և Շուշիի ազատագրման 19 ամյակին նվիրված: Միջոցառումն ավարտվեց տոնախմբությամբ:

10.Գյուղապետարանը մշտապես աջակցում է նաև դպրոցին, հետաքրքրվում է նրա առօրյայով, ապրում նրա հոգսերով և հաջողություններով: Վերանորոգվել է դպրոցի ճաշարանը և տրամադրվել է համապատասխան գույք:

Այս ամենով հանդերձ համայնքն ունի դեռ չլուծված շատ հիմնախնդիրներ:

Հայկավան համայնքի հիմնախնդիրները

1. Մանկապարտեզի շենքի վերանորոգում:
2. Կուլտուրայի տան վերանորոգում :
3. Խմելու ջրի ներտնտեսային ցանցի նորոգում
4 Ոռոգման ցանցի վերանորոգում:
5. Ճանապարհների վերանորոգում:
6. Գյուղապետարանի վերանորոգում:

Արմավիրի մարզի Հայկավան համայնքի 2011թ 1-ին

կիսամյակի բյուջեի եկամուտների հաշվետվություն

	Եկամուտի անվանումը	Պլան	Կատարողական	Պլանի կատարման %
1	Հողի հարկ	8656,0	1204,8	13,9
2	Գույքահարկ շենք շինություններ	380,0	32,7	8,6
3	Գույքահարկ փոխադրամիջոց	2499,0	454,7	18,2
4	Դոտացիա	8010,7	4005,4	50
5	Տուրքեր	248,0	99,0	39,9
6	Հողի վարձավճար	36,9	8,1	21,9
7	Տարեսկզբի ազատ մնացորդ	44,0	44,0	---
8	Համայնքի սեփ. համարվող գույքի օտարումից մուտքեր	---	-----	----
9	օրենքով և իրավական այլ ակտերով մուտք:	----	42,7	---
10	Ընդամենը վարչական բյուջե	19830,6	5847,4	29,5
11	Ֆոնդային տարեսկզբի ազատ մանացորդ	698,0	698,0	-----

Համայնքի ղեկավար՝ Մ. Գևորգյան

Առաջատար մասնագետ՝ Կ. Վարդանյան

Արմավիրի մարզի Հայկավան համայնքի 2011թ 1-ին

կիսամյակի բյուջեի ծախսերի կատարման հաշվետվություն

Ծախսերի անվանումը		Պլան	Կատարողական	Պլանի կատարման %
1	Տեղական ինքնակառավարում	12356,9	3240,7	29,3
2	Մշակույթ	993,0	-----	-----
3	Սոց, արտոնություններ	400,0	----	-----
4	հանրային այլ ծառայութ.	795,0	100	12, 6
5	Աղբահանում	796,8	126,1	15,8
6	Այլ մշակութային կազմակերպութ.	800,0	200,0	25,0
7	Պահուստային ֆոնդ	-----	---	---
8	Բնակարանային տնտեսություն	3164,7	1392,5	44,0
9	Ընդամենը վարչական բյուջե	19306,4	5435,0	27,3
10	Այլ ակտիվների ձեռքբերում	231,0	231,0	100
11	Կապիտալ նորոգ. ծախսեր	835,2	718,0	85,9
12	Շենքերի , շին.ծախսեր	200,0	200,0	100,0
13	Ֆոնդային բյուջե	1266,2	1149,0	99,7
	Ընդամենը	20572,6	6584,0	32,0

Համայնքի ղեկավար՝ Մ. Գևորգյան

Առաջատար մասնագետ՝ Հ. Վարդանյան